ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, 18 հունվարի (ՏԱՍՍ-ի թղթ.): «Խաղաղություն քո տանը»՝ անդորրի ու բարեկեցության այս բարի ցանկությունը, որը հայտնի է ամենուրեք, այժմ ինչ-որ առանձնահատուկ ձևով է հնչում Հայաստանում: Ստեփանավանի շրջանի Պուշկինո ինտերնացիոնալ գյուղի բնակիչները այսօր այս բառերով դիմավորեցին վերադարձած ադրբեջանցի համագյուղացիներին, որոնք, ենթարկվելով պրովոկացիոն լուրերին, անցած տարվա վերջին մեկնել էին Ադրբեջան:

Բոլոր տասը բնտանիքները մրտան իրենց տները, որոնց ոչ ոք ձեռք չէր տվել և, որոնք լրիվ պահպանված են: Հայրենի վայրերը ադրբեջանցի բնակչության վերադառնալու գործում որոշակի դեր խաղաց «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին» ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է ՄՏՆՈՒՄ ՏՆԵՐԸ

— Մարդիկ հավատացին, որ ազգամիջյան հարաբերություններում բոլոր կոնֆլիկտային իրավիճակները ու բերությունները կվերացվեն,— ասաց կուսակցության Ստեփանավանի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար Լ. Մագբաղյանը:— Մեր շրջանը բնակչության կազմով բազմազգ է: Սրինակ, Ցաղդան գյուղում ապրում են հայերից բացի՝ հույներ, քրդեր, ադրբեջանցիներ... Եվ մինչև անցյալ տարվա Հոյեմբեր ընթացքում միջև ոչ մի կոնֆլիկտ չէր առաջացել: Հետո հարյուրավոր բնտանիքներ հանկարծ սկսեցին տեղափոխվել Ադրբեջան: Մենք շատ ենք ցավում դրա համար, ուզում ենք, որ նրանք բոլորը շուտով վերադառնան: Անհրաժեշտ ամեն բան կանենք, որ նրանք հանգիստ և նյութապես ապահով ապրեն: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղում կառավարման հատուկ ձև մտցնելուն, անձամբ ես դա միակ ճիշտ միջոցն եմ համարում՝ ինչպես հենց ինքնավար մարզում, այնպես էլ Ադրբեջանում, Հայաստանում իրադրությունը կայունացնելու գործում:

Կուսշրջկոմի քարտուղարի կարծիքին լրիվ համամիտ եղավ նաև միլիցիայի սպա Ն. Լոմբաձեն, որը իրավապահ մարմինների մի խումբ աշխատողների հետ օգնության է եկել երկրաշարժից տուժած եղբայրական հայ ժողովրդին: Ամենագլխավորը, նրա կարծիքով, հաշտ ու համերաշխ, բարիդրացիաբար ապրելն է: